

TELL

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարւանը 6 րուբլ:

ԹԻՖԼԻՍՈՒՄ զԲՎՈՒՄ ԵՆ միմիայն Խմբագրատան, մէջ:

Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից) :

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի՞նչ չուենք, — Ն ե բ թ ի ն ա ե ս ու թ իւ ն,
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: — Ա թ ա
թ ի ն ա ե ս ու թ իւ ն, Գրանիս, Բանիս,
— «Մշակի» հեռագիրներ, — Յայտարարութիւն
ներ: — Տեղեկացոյց, — Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն: Տեղե-
կագիր:

ԻՆՁԻ ԶՈՒՆԵՆՔ

Ընթերցողը կարդացած կը լինի,
որ Սիբերիայի Տոմսկ քաղաքում
շուտով համալսարան է հիմնվում
Ահամայ հարց է առաջարկվում
մի՞թե Անդրկովկասը Սիբերիայից
անընդունակ է մի բարձրագույն
դպրոց ունենալու:

Մենք շատ անգամ խօսել ենք մեր լրագրի մէջ Անդրկովկասում համալսարան ունենալու անհրաժեշտութեան մասին: Մենք այսինքն այդ հարցի վրա տնտեսական և կրիմայական տեսակէտից:

Բայց կայ և մի ուրիշ կողմ
որ ուշադրութեան արժանի է:

Մեր երկրի բնական հարստու-
թիւնները մնում են չը հետազո-
տած և անմշակ, այդ կողմից ան-
հրաժեշտ է վերջապէս ունենալ
մեր երկրի մէջ մի կենտրոնական
բարձրագոյն գիտնական հիմնա-
րդութիւն, որ հետազոտէր մեր եր-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Մ Ա Ն

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

မင်း နှစ်ရာတစ်ရာ နှစ်ရာတစ်ရာ နှစ်ရာတစ်ရာ နှစ်ရာတစ်ရာ

4. 1876 1876 1876

(Պաշտօնական հրատարակութիւնք ազգային
պատրիարքարանի)

Այսքանը բաւական է կառավարութեան պատշաճակալներին մասին, այժմ դառնանք այն հարստահարութիւններին, որ կատարվում են մասնաւոր ընկերակալների (դէրէքէկիներ) և հասարակ ժողովրդի կողմից:

Պատրիարքարանի արձանագրութիւննց մասին լինելով մանրամասն տեղեկութիւններ կան այն մասին, եւ պատրիարքարանի Բարձր Դրան մասնաւորապէս բողոքաւորելու մեծագոյն մասը նուիրուած են գաւառական հարստահարութիւններին, լինելոցովը արդէն բաւական զազալար ստացած է, թէ ինչ տեսակ հարստահարութիւններ են կատարւում, եւ մենք դրա վրա կրկնապես խօսելու նպատակն չունենք, միայն երկմտում ենք մասնաւորապէս ջոշոյ տալ այն աղբիւրները, որ տեղից ծագում են հարստահարութիւններն:

Տաճկական Հայաստանի ժողովրդաբնակ
թեան մէջ հայերից յետոյ բազմութիւն են կա
մուս քրդերը, մի քանի քրմեր, քանի մը քաղաքացի

կրի բնական հարստութիւնները:
Ուրեմն նախ և առաջ անհրաժեշտ
է համալսարանի բնազդիտական
ֆակուլտէտը:

Ուրիշ կողմից մեր երկիրը բռնակցեցրած լինելով անթիւ ազգութիւններով, այդ բոլոր ազգութիւնների հնութիւնները, նրանց պատմական արձանները և գրութիւնները մնում են չհտազօտված, իսկ այդ ազգութիւնների շատերի լեզուն կորած է, կամ կորչում է.... Այդպիսով կորչում է, ոչ մի գիտնական հետազոտութեան չենթարկւելով, ուղիացիների լեզուն. չէրկէսների բոլոր բարբառները արդէն գրեթէ կատարեյապէս կորած են:

Ուրեմն այդ կողմից անհրաժեշտ է մեր երկրում համալսարանի լեզուագիտական և պատմամաթեմատիկական ֆակուլտետ: Եւ այժմամանակ լեզուագիտական բաժինը ունենալով, մեր երկրի զանազան ինքնուս գիտնականներին արխեօլոգներին, պատմաբաններին և աշխարհագրողներին անհնարին կը լինի հեղինակել զանազան իբր ուսումնական գրվածքներ, մոլորեցնել իրանց վայրիվներոյ գրվածքներով թէ հասարակա-

բում է նախնական կեանքով, մի ազգ, որ արհեստ և երկրագործութիւնն չունի՝ այլ աւազակութիւնը համարում է արդար վաստակ և սպանութիւնը՝ քաջութիւն։ Քրդերի մեծ մասը վարում են չուական կեանք և իրանց անասուններով թափառում են հայոց լեռներում, իսկ շատերը մասը կիսահաստառաքնակ զրութիւնն է։

Տաճկական կառավարութեան թոյլ զօրութիւններն անօգուտ եղան վայրենի քրդերէնութիւնէն, և թանգիմաթը իր բոլոր մարդասիրական տրամադրութեամբ չը կարողացաւ մեղմացնել այս բարբարոսների քրիստոնեաների վերաբերութեամբ կատարած անգլութիւնները: Գոռլոգ է չի բաթն երն միշտ մնացին անզուտ և մինչև այսօր չարութեամբ են իրանաւարդութիւնները: *) Այս այսպէս լինելու յետոյ կառավարութիւնը այսպիսից լուրջորէն

*) Մինչև այսօր ասիական Տաճկաստանում առևտրական Հայաստանի կողմերում դեռևս գտնվում են այնպիսի երկիրներ, որիսանք, ինչպես լանդզի, ուր քուրդներն բուրժուական և ազգայնապետական պահպանումով, բուլղարների ջալալայ կոչված քուրդ զեղի հետ խառն ընկալվում են նաև հայեր, որոնք մի և նույն վայրերում թե՛նաև մեջ՛ են որպես քուրդներ և իրանց ընտելությունները հատ չեն գտնադրանվում Ալասան հայերին էլ քուրդների հետ առաջակցություններ են անում, դժգոհ գտնադրանք կողմից արշալաններ են գործում, և մինչև անգամ չեն խնայում եթե՛ պատահելիս լինեն իրանց կրճատիկներին իսկ Տաճկաստանի և Պարսկաստանի սահման գծի վրա ընկած լանդզի քուրդներ համարեն բոլոր ապստամբ և անդուստպ են, և անաղաք անցնում են սահմանի գիծը, որ կողմից՝ որ փոքր ի նեղված է են:

կան կարծիքը և թէ գիտութիւնը, որովհետեւ ամեն այդ տեսակ գրվածք կենթարկվի պրօֆէսօրների խորհրդի գիտնական խիստ քննադատութեանը:

Վերջապէս բժշկական ֆու-
կուլտէտը մեծ օգուտ կարող է
բերել երկրին պատրաստելով բը-
ժշկներին, որոնց պակասութիւնը
շատ զգալի է մեր երկրում և ու-
րիշ կողմից կարող է մեծ գեր-
խաղալ ընդհանուր մարդկային
գիտութեան մէջ, հետազօտելով
մեր բնիկ ժողովրդների մէջ եղած
ժողովրդական բժշկութեան մի-
ջոցները, որոնք մինչև այժմ ան-
յայտ են մնում գիտութեանը:

Այսպիսով այդ երեք ֆակուլտետները՝ բնագիտականը, ֆիլա-
լոգիականը և բժշկականը անհրա-
 ժեշտ են մեր երկրում: Գրեթե
հիմալի թիֆլիսում այդ երեք
ֆակուլտետներից բաղկացած հա-
 մալսարանը:

Այդ անհրաժեշտ հիմնարկու
թիւնը գլուխ բերելու համար
բացի տէրութեան յօժարութենից
անշուշտ հարկաւոր է թէ քա
ղաքի, և թէ ամբողջ երկրի մաս
նակցութիւնը:

9. U.

Վրա նաև չէր բեզնեւրը, Կովկասի լեռներ
գաղան որդիքը, որոնք իրանց կեանքի ձեւեր
չատ չեն գանաղանվում քուրդերից...

Վուրդերը հարստահարութիւններէ մէջ յափ-
տակութիւնները, մահը գողութիւնները և աւա-
ղակութիւնները պնդան սովորական են դար-
ձել, որ կարծես թէ, փողովուրդը ընտելացել
ներանց և արտաքոյ կարգի բան չէ համարու-
նալ։ Այս պատճառով, հաղիք թէ մէկը փտահա-
նում է բողոք բարձրացնել... «էհ, քուրդ
ներա գործն այս է» ասելով, ինքն իրան միջ-
թարում է։ Եւ ուրիշ ճար չունի ողորմելին, ն-
ստիպված է լռել, եթէ ձայն բարձրացնէ, այ-
նքողքը, որ այսօր գողացան նրա ոչխարը կա-
նգը, միւս օրը կը կորէ տիրոջ գլուխը։

Բայց ըստից իր արհեստի մէջ ծոյլ չէ, ն
միշտ չէ բաւականաւում մանր գողութիւններ
հատ անգամ բոլորովին կաղմակերպված խու
բեր, որոնք բաղկանում են հարիւրաւոր ձիւղա
ներից, արշաւանքներ են գործում և ասպատակ
կում են մի կողմի ամբողջ գիւղգորայքը, աւա
ն են առնում ոչխարների հօտեր և այլ անասունն
և զրկում են գիւղացիներին բոլոր ունեցածի
Այսպիսի դէպքերում, որ կրկնվում են խիս
յաճախ, արդէն, որպէս սովորաբար ասում են
«շաւապը ոսկորին է հասնում» և ժողովուրդը
ստիպված է բողոք բարձրացնելու Բայց ում,
է նրա ձայնը լսողը.— Խղճալի ձայնը միշ
մնում է իր կուրծքի մէջ խեղդված....

Պատրիարքարանի արձանագրություններից
բևում է, որ գաւառներից եկած բողոքներն ա
հասարակ վերաբերում են այն տեղերին, որոն
աւելի մօտ են զրված մեծ քաղաքներին, որպի
են վանք, Մուշք, Բաղէշք, Տիգրանակերտք, Ա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ա/Է. քանդակաւոր, 10 օգոստոսի

Վարդավաթի դէմի շարաւիթ օրը, յուլիսի 29-ին, Նիքեանի թեմական տեսուչ Ալլիազեանց կարապետ վարդապետը որք աւագ եկեղեցում մի սքրտաշարժ ըրադո՞ւնէր, բացատրելով մեզ ուսումնականներն եւ ուսման օգուտը. ապա յայտնուց, որ եկել է վեհապառ. կաթողիկոսի կողմից տեղիս երկսեռ դպրոցներէ համար հոգաբարձուներ ընտրել տալու եւ հրաւիրեց հասարակութեանը հետեւալ կիրակի օրը պատգամաւորաց ընտրութեանը յերկայ գտնվելու, յայտնելով, որ ամսինայն ո՞ք, յետին ժամուկէն սկսած մինչեւ առաջին մեծատունը իրաւունք ունի ընդհանուր ժողով գալու եւ ձայն տալու իս, որ ոչ առաջին մեծատուններէնցն եմ եւ ոչ էլ յետեանալ ժամակոյններէց, բայց ձանաչում եմ իմ անձին պատուել նոյնչափ որչափ եւ ամեն առաջաւոր հասարկովդ անքան, պարտք համարեցի ինձ, իբրեւ անդամ հասարակութեան, ներկայանալ ժողովը Տեղի անձկութեան պատճառով ժողովը, որ գումար լիւելու էր դպրոցի սենեակներում, տեղափոխվեց Աւագ եկեղեցին. այստեղ ամբողջ մի առ մի աւելացաւ թէ տեղի ընդարձակութեան եւ թէ այն սովորական ազատութեան պատճառով որ ամեն իրաւունք ունեն եկեղեցի մտնելու եւ գումար գալու՝ քանի որ նրա դռները բաց են ժողովի նախագահ հայր սուրբը չըջպատճառ մի՞ քանի աղաներով կարծես թէ նրանց կամբին միայն քտրկացած՝ ընաւ ուշք չէր դարձնում ոչ ժողովի բարեկազմութեան եւ ոչ իսկ խորհրդածութիւններէ ազատութեան վրա. այստեղ նախազգահ եւ թէ ներակայ գտնվող դպրականտի եւ ոմանց ազգեցեցութեամբ ամբողջ մէկ բերան կը պոռտար, կերերար, կը ճար. ժողովը նման էր, հեռի եկեղեցուց, մի չուկայի, ուր ամենքը խօսում են, բայց ոչ ոք չէ հասկանում. Հազիւ հազ կարելի էր երբեմնիս կի խօսք որսալ ակնարկու եւ թէէ այդ խօսքը հաճեի էր պարոններին, կամ հայր սուրբին՝ լաւ, եթէ ոչ իսկոյն նրանց

դրոււմը և այլն: Այդ այն պատճառով է, որ մեծ քաղաքներէ մօտ աւելի շատ են պատահում հարստահարութիւններ, այլ ընդհանկաւակն, հարստահարութիւններն որքան մօտենում են մեծ քաղաքներին այնքան նուազում են: Բայց մեծ քաղաքներում հայոց առաջնորդներ կան, առաջնգլուխներ փայտիք կան, և ժողովուրդը տաշմարդաբանի միջնորդութեամբ կամ ուղղակի կարողանում է իր բողոքները հասցնել Կ. Պոլիս: Բայց անկիւններում, այսինք կենտրոնական քաղաքներից հեռու գտնված տեղերում աւելի շատ և աւելի անգութ կեբրպով են կատարվում հարստահարութիւններ, բայց բոլորն կորչում են անյայտութեան մէջ, Որովհետեւ այն կողմերի թշուառ ժողովուրդը մինչև անգամ չէ գիտէ, թէ Կ. Պոլսում պատրիարքաբան կայ, սահմանադրութիւն կայ և ինքն կարող է այն տեղ դիմել:

Կ. Պօլսի պատրիարքաբանը իր թոշյ ստանձա-
նադրական վարչութեամբ մինչև այսօր չէ կա-
րողացել իր պաշտօնութիւնը այնքան տարա-
ծել, որ կարողանայ ասիական Տաճկաստանի
բոլոր հայ ժողովրդաբանութեան վրա ազդել
և իս պատճառով ժողովրդի և ազգային վար-
չութեան կենտրոնի մէջ փոխադարձ յարաբե-
րութեան կապեր չեն կազմվել, իս անձաբա-
նութի եմ ունեցել լսել թշուառ հայի զանգառ-
ները իր դրութեան վրա. երբ նրան ասում ես,
թէ Բիչու չես բողոքում, սովորական պատաս-
խանը լինում է՝ «Ո՛ւմբ բողոքեմ»... Բիււա-
ռականը չը գիտէ մինչև անգամ, թէ յանցաւոր-
ների համար դատարաններ կան. նա ծանցաւոր
է մի դատարան միայն, այն է՝ երկինքը...

զ Ինչ հարկ կայ բողոքելու, քանի որ ժողո-

հրամանով պատրաստի կանգնած արքանեակ-
ները կը հեռացնէին խոտողին կամ դուրս կանէին
եկեղեցուց։ Այս պարագաներու մէջ, երբ փոք-
ինչ խոսելու հնար եղաւ, եւ յայտնեցի ժողովին
թէ հոգեւոր իշխանութիւնը հրամայել է, որ վար-
ժապետները իրաւունք չունենան պատգամաւոր
եւ հոգաբարձու ընտրվելու։ Այս իշխանութեան
այդ հրամանն արդարացի է և կարեւոր այն պատ-
ճառով, որ վարժապետներն իրանց անձնական
շահերի երեսից կարող են վնասակար լինել զըզ-
րոցներին, ապա ուրեմն նոյնպէս և գուցէ աւելի
վնասակար կը լինեն դպրոցին և այնպիսի հոգա-
բարձուներ, որոնք ընտրված են դպրոցի կըր-
պակներում նստող վարժապետներէից կամ նրանց
ազգականներէից, ինչպէս որ այս վերջին տարի-
ների փորձն էլ այդ ցոյց է տուել։ Իմ այս հա-
մես կարծիքս, որ դպրոցների օգտին կը վերա-
բերէր, բնական է, որ պիտի դուր չը գար մի
քանիսին, մանաւանդ այն պարտներին, որոնք
կրպակապանները գտնուէին, մի և նոյն ժամանակ հո-
գաբարձուներ են։ հաշիւ բերանս բայց արի իմ
միտքս յայտնելու, մի ահագին աղմուկ բարձրա-
ցաւ և ինձ արդեւեցին խօսել։ Վրա թափվեցին
ինձ վրա և ուղղուէին ինձ ծեծել։ Հայր
նախագահը տեսնելով այս, բնաւ իսկ չը հո-
գաց թէ մարտիկն և թէ նրանց թելադրու-
ներին, զսպելու և բնաւ ուշադրութիւն չը դար-
ձուց ոչ իմ կարծիքիս վրա և ոչ այդ ար-
գարութեան և խղճի հակառակ վարմունքի վրա։
Ընդհակառակը, երբ ամենքը ձայնեցին ինձ ժո-
ղովից դուրս գալու՝ նա չը պաշտպանեց իմ իրա-
ւունքն և ես ստիպված էի ակամայ հեռանալ
այնտեղից, և դրանով հարկադրվեցան մնացած
արդարաւէր անձինքներն լռութեամբ անցուցա-
նել իրանց ներկայութիւնն ժողովի մէջ կամ
ինձ պէս հետզհետէ հեռանալ այնտեղից։
Ժողովի և նրա նախագահի այսպիսի անիրաւ
վարմունքի դէմ բողոքելով, ես ոչ միայն իմ ան-
ձիս պատիւը կուգեմ պաշտպանել, այլ և մեր
ամբողջ հասարակութեանը, որի անունով հաւա-
քված մի քանի անձինք իրենց քմեքին համա-
ձայն վճիռներ կը դնեն, իրենց գրպանը՝ կը չա-
հեն և կը բռնանան բոլորի գլխին իրենց ցիւրքն
առաջ տանելու համար։ Իմ բողոքս շատ հիմնա-
ւոր է, և եթէ իմ ձայնս լսելի չեղաւ այն ժո-
ղովի մէջ, կաղաչեմ լսելի անել նոյնը մեր մա-
մուլի մէջ, թող ամենքին յայտնի լինի, որ ոչ
եւ իրաւունք չունին մէկի նուիրական իրաւունքի
առաջ սահման դնելու, քանի որ նա ոչ մի մե-
ղադրանք տակ չէ։ Ես իբրեւ անգամ հասարա-
կութեան ներկայացուցիչ ժողովին իմ համեստ կար-
ծիքս յայտնելու այնպէս, ինչպէս և այլ ներկայ
գանձող անդամներն, որոնք անհեթեթ, կողմ-
նաւոր և կրքոտ կարծիքներ էին յայտնում, և
եթէ նախագահը ու միւս պարտները երկայնա-
միտ էին դէպի նոյն անդամները, ինչ իրաւամբ
կամ որպիսի բանականութեամբ զրկում են ինձ

խօսելու իրաւունքից։ միթէ այն պատճառով, որ
ես չեմ ծառայում նրանց անձնական շահերին
կամ կրքին, միթէ այն պատճառով, որ ես ան-
կեղծութեամբ յայտնեցի, թէ ուսումնարանի շա-
հերը ոտնակոխ եղած են, կամ միթէ այն պատ-
ճառով, որ հոգաբարձութեան պակասութիւնը
ցոյց տուի։ Այս ամբողջի մէջ կա ինչ անձինք,
որոնց անհաճոյ էր իմ կարծիքս և գրգռեց նրանց
զայրոյթը, այդ դեռ հասկանալի է, որ նրանց
հաճելի էր և իմ դուրս գալս ժողովից, բայց ինձ
համար միայն զամայն հասկանալի չէ, թէ որ հա-
հանդի դուրսվեալ կամ ինչ իրաւունքով հայր
նախագահն ինքն, մեր վիճակի դպրոցները թե-
մական տեսուչը, հայոց ընդհանրական Հայրա-
պետի ներկայացուցիչը և իր քարոզի մէջ այն-
պիսի հանդիսաւոր կերպով ամենքին իրաւունք
ապահովող վարդապետը, հակառակ ամենայն
արդարութեան, անտարբեր գտնվեցաւ դէպի իմ
կարծիքս և թող տվեց ինձ ժողովից դուրս հա-
նելու։ Ել ձեռն պիտի որոնէի ես իմ արդար պա-
հանջիս բաւականութիւնը։ միթէ ես էլ պիտի
այլոց նման ձիւռ աղաղակ բարձրացնէի և
սուրբ եկեղեցու ատենը կուգի ու յիշգրաբա-
նութիւնները ասպարէզ դարձնէի, ինչպէս որ
դարձել էին կրպակապաններն և նրանց ար-
բանեալները և հայոց եկեղեցու վարդապետը
դեռ կարող էր այդ ամենին տանող լինել ա-
ռանց մի որ և ինչ զգուշութեան միջոց գործ
դնելու։

Այսպիսի հրապարակական գրկողութեան և
անկարգութեան վրա իմ արդար բողոքս նախ-
պարքը համարեցի մատուցանել Վեհափառ Կա-
թողիկոսին, նոյնը յայտնելով պատուական թեր-
թիւ միջնորդութեամբ և մեր բարեմիտ հաս-
ակութեանը, ես կարեւոր կը դատեմ տեղեկու-
թիւն տալ, որ գումարված ժողովի ընտրութիւնը
չէր կարող լինել արդար և անաչառ։ Նախ այն
պատճառով, որ ժողովին ներկայ չէին մեր հաս-
ակութեան անդամների ամենամեծ մասը՝ արա-
պատճառը ոչ թէ նրանց անտարբերութիւնն էր,
այլ այն, որ նախագահ հայր սուրբը չըլապա-
տել էր իրան կասկածելի մարդիկներով և ոչ
ինքն կը դիմէր խաղաղասէր և բանիւտեմ խոր-
հրդածութիւններին և ոչ էլ հնար մտածեց, որ
նրանք պարտաւորված դային ժողով և հրապա-
րակ հանէին իրանց կարծիքը, թէ ես կարող
էր...։ Երկրորդ այն պատճառով, որ դպրոցի կա-
նոնադրութեան մտքի հակառակ է սահմանել
նա երկու շաբաթ ժամանակ պատգամաւորների
ընտրութեան համար և երկու շաբաթ էլ հոգա-
բարձուներին։ պատգամաւորներին ընտրել տուեց
վերոյիշեալ խայտառակ ժողովում յուլիսի 30-ին,
իսկ հետեւեալ օրը նոյն ամսի 31-ին, առաւօ-
տեան 9 ժամին, ընտրել տուեց հոգաբարձունե-
րին։

Նախագահ վարդապետը, եթէ իրան չէ խա-
բոււ, լաւ գիտէր, որ ամեն երկիւստ հասկանում

է թէ երկու երեք ժամի մէջ այնպիսի անկարգ
ժողովում, ուր ոչ օրինաւոր խորհրդակցութիւն
ու կառաքանութիւն կար և ոչ էլ անգամ մի որ
և ինչ ձև քուէակրութեան, այլ ընդհակառակը
միայն մի փողոցային բուռն դուրսվելու կը թա-
գաւորէր, եթէ կարելի եղաւ մի որ և ինչ ընտ-
րութիւն գլուխ բերել՝ դրա պատճառն այն էր,
որ ինքն գեր. նախագահը թող էր տուել օր
յառաջ ընտրութեան ձեռն այնպէս սարքելու,
ինչպէս որ եղած էր. եթէ այնպիսի մի կանխիկ
պայմանադրութիւն կամ համաձայնութիւն եղած
չը լինէր՝ նախագահի և նրա ընտրած ժողովա-
կանների մէջ, այն ժամանակ միաբերան չէին
մերժի հակառակ կարծիք յայտնողներին և այն-
պիսի արագ ընտրութիւն չէին անի, իսկ պատ-
գամաւորների ընտրութեանց յետոյ հազիւ ու-
րեմն մի գիշեր անցաւ և հետեւեալ օրը հոգա-
բարձութեան ընտրութիւնն եղաւ։ Թէ արդարեւ
բոլոր այդ ընտրութիւնները նախագահի և մի
քանի մասնաւոր շահեր որոնող անձինքների փո-
խադարձ համաձայնութեամբ են եղել և միայն-
գամայն սարքովի են ի շարքէ նախագահի կողմ-
նախադրութեան խաղաղութեամբ, դրան ապացոյց է
և այն, որ պատգամաւորների ընտրութեանից յե-
տոյ անմիջապէս, երբ ընտրողական թերթը ա-
ռաջարկել են ժողովականների ստորագրութեա-
նը, շատերը հրաժարվել են ստորագրելու, շա-
տերն էլ դուրս են փախել, այնպէս որ սրա
առաջն առնելու համար ժողովի առաջնորդներն
հրամայել են եկեղեցու դռները փակել և մնա-
ցածներին բռնի ստորագրել տալ, բայց և այն-
պէս ստորագրողների թիւն այնքան պակաս է
որ երկու շաբաթ պոլիցիականները ընտրողական
թերթը ձեռքերին սրան նրան ստիպում են ստո-
րագրել, և հրաժարողներին դաժապան սպառ-
նալիքներ են անում։ ոմանց տեղին էլ իրանք են
ձեռք դնում։ Այնքան է, թէ որքան անկանոն և
հետաքրքար անվաւեր ընտրութիւն է եղած, թէ եւ
հայր նախագահն առանց խղճահարկելու ինչ-
պէս լսած եմ, առաջարկել է նորընտիր հոգա-
բարձուներին Վեհափառ Կաթողիկոսի ընտրու-
թեանը։

Եւ երրորդ՝ նախագահ հայր սուրբի կարծես
պարտաւորութիւնն էր այնպէս առաջնորդել
ժողովին, որ դպրոցի ապագայ իրենց ձեռքը
ունեցող ընտրելի հոգաբարձուք լինէին ըստ
ամենայնի նախապատրաստված անձինք և որ
ամենից գլխաւորն է, նորոգ ընտրելի հոգաբար-
ձուների մէջ չը գտնվէին հին հոգաբարձու-
ներից այնպիսիները, որոնք դպրոցների կրպակ-
ներից շահվում են։ Այսօր հասարակութեան
ամեն մի բարեխիղճ անձ կը վկայէ, որ նախա-
գահն այս կողմից միանգամայն անհղի գտնվեց։
Նորընտիր հոգաբարձուներին մէջ կան այն մի
երկու պատուաւորման և ազնիւ անձինք, սակայն
դրանք յայտնի են իրանց համեստութեամբ և
շատ հաւանական է, որ իրանց պաշտօնակիցնե-

րին համապատիւ չը համարվելու համար, կամ
գուցէ իրանց անձնական գործերի շատութենից
պիտի հրաժարվեն և հոգաբարձութեան առպա-
րէզը պիտի թողնեն հին հոգաբարձուք՝ եղած
անդամներին և նրանց կամակիցներին։ Իսկ ինչ
է արել հոգաբարձութիւնը՝ յօդուս դպրոցների,
ես չեմ կարող նկարագրել, որովհետեւ դեռ ակ-
ներն բան չը կայ։ այսքանս հաստատ կասեմ
միայն, որ անշարժ կառուածները քաղաքիս աշող
ժամանակները դպրոցին մինչև քսան և հինգ հա-
զար բոլոր լիաժառնգ արդիւնք պէտք է ընկնէ,
բայց հոգաբարձուներին անտարբերութեանից կամ
չահասիրութեանից, մինչև այժմ այնպիսի անձանց
ձեռք են, որոնցից մի քանիսն հոգաբարձուներից
լինելով, մի քանիսն էլ նրանց կողմնապահ մը-
տերի։ Ինչից ոչ միայն մի չնչին վարձ են տալիս
այլ և այդ չնչին վարձերից դոյզացած գումարն էլ
երկու տարի է բնաւ չէ երևում։ այսպիսով դը-
պրոցը զրկվել է անպիսի գումար եկամուտից և
մի և նոյն ժամանակ իր ունեցած միջոցներից
արել է քաւական մեծ ծախս մի տարի ժա-
մանակ պարապ վարժապետներին ի դուր ու-
նիկ վճարելով։ Այս և այսպիսի հարկաւոր ան-
հոգութիւններ և վնասներ է պատճառել հո-
գաբարձութեան մի երկու ներդրածող անդամները
և այս դիտէր նախագահ վարդապետը։ Հարց-
նում եմք նրան հրապարակաւ ինչ հնար գործ
դրեց նա, որ նոր հոգաբարձութեան մէջ այն
վնասակար տարրերը չը լինեն, կամ թէ հա-
զիստ է արդեօք իր խիղճը այնպիսի ընտրու-
թիւնների նկատմամբ։ Այս ամենի համար իմ
արդար բողոքս մատուցանելով մեր ընդհանրա-
թեանը, յոյս ունեմ, որ իմ խօսքերս արձագանք
կը գտնեն թէ հայրենակիցներին և թէ մասնա-
ւոր մեր հոգեւոր իշխանութեան մէջ։

Առօրին Արիւսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում ԲԱԳՈՒԻՑ, որ գաղթականնե-
րին օգնելու այնտեղի մասնաժողովի գործերը
շատ խառն դրութեան մէջ են։ Չը նայելով, որ
անդամները երեք անգամ հրաւիրվել են նիստ
կազմելու, երեք անգամ էլ չեն եկած և նայեցել
անդամների պակասութեան պատճառով թղթա-
կիցը յոյս է յայտնում, որ մասնաժողովի ան-
դամները գտնէ սեպտեմբերին կը հաւաքվին։

Մեր թղթակիցը գրում է ՀԻՆ-ԲԱՅԱՋԵԹԻՑ
հետեւեալը. «Այստեղի թիւրք բեզերից մէկ իւր-
րախմ անունով չըլուէ հայերի տները և նրանց
համարում է չը գաղթել։ Իբրայիմ-բեզը թիւր-
քաց կառավարութեան ժամանակ մեծ նշանա-
կութիւն է ունեցել։ Բայց զէթի պաշարման ժա-

վերջը փորձած է և գիտէ, որ իր գանգաւանե-
րով աւելի վատթարացնում է իր վիճակը։ Որով-
հետեւ բողոքներն թէ պատրիարքարանի և թէ
Բարձր. Դրան կողմից որ և ինչ բաւականութիւն
չը գտնելով, այսպիսով աւելի վատահոգութիւն
տուած են լինում հարստահարողին յարատեւ
իւր շարագործութիւններին մէջ։ Այսպիսով աւելի
գրգռվում է բռնակալի վրէժխնդրութիւնը, և
եթէ նա առաջ փոքր ի շատեւ երկիւղ ունէր դա-
տաստանից այնուհետեւ բողոքովին միամտա-
նում է, և աւելի վատահոգութեամբ սկսում է
առնչել իր զօրերը։ Այս դրութեան մէջ հային
մի ելք է մնում, — այն է խնայարհիւ իր թշնա-
մու անդթութիւններին առջև և բողոքովին անձ-
նատուր լինել նրա կամքին...»

Այս այստեղից է յառաջ գալիս այն դրու-
թիւնը, որ նկատվում է պատրիարքարանի ար-
ձանագրութիւններից. ամբողջ հայոց գիւղօրայք
և մինչև անգամ վանքերը ու եկեղեցիները քուրդ
զէր է բէ կին երկն, թուրք բռնակալներին, և
ազդեցութիւն ունեցող մուֆթիին երկն ու
չէլի երկն հարկատու են դառնում։ Դա մի
ակամայ հարկատուութիւն է, որ ժողովուրդը ճա-
բահատելով վճարում է իր հարստահարողին, որ-
պէս զի իրան հանգիստ թողնէ։ Այսպէսով ժո-
ղովրդի վրա ծանրանում է երկու տեսակ հար-
կատութիւն, մինը՝ տաճկաց կառավարութեանը,
միւսը՝ քուրդ կամ թուրք դէր է բէ կին երկն
և ինքնիշխան բռնակալներին։ Այս վիճակին
ենթարկվում է ոչ միայն մի ամբողջ հասարա-
կութիւն, այլ և մասնաւոր անձինք (մանաւանդ
երբ փոքր ի շատեւ ունեւոր են) մտնում են այս
և այն ազդեցութիւն ունեցող թուրքի և քուրդի
հովանաւորութեան ներքոյ, որպէս զի ուրիշներն

նրանց չը վնասեն։ Բայց այս պաշտպանութիւնը
շատ թանկ է նստում։ պաշտպանեալ թէ իր
կայքով և թէ իր պատուով դառնում է իր ա-
ղայի գերին։ Դա մի կամուր որ ստրկութիւն է,
որով անգործ հպատակում է հոգրին և դառնում
է նրա կամքի բոլորովին կրաւորական առար-
կայ...։ Դա ճորտութեան սկզբն է, որի
տեսլը օրինակները տեսնվում են նաեւ պատ-
րիարքարանի արձանագրութեանց մէջ։ Մոգաց
կողմերում Տինիս աւանի քուրդներն տեղային
հայ գիւղացիներին որպէս ճորտ և գերի իրանց
մէջ վտառում են...

Տաճկաստանի բարձր կառավարութիւնը նկա-
տելով, որ քուրդերի և ուրիշ վայրենի ցեղերի
բարբարոսութիւններն յառաջ են գալիս նրանց
թափառական կեանքի բնաւորութիւնից, վեր-
ջին ժամանակներում ուսեց աշխատել, որ նրանք
թողնեն չուական կեանքը, թողնեն խաշնարա-
ծութիւնը և հաստատ բնակութիւններ ունենան,
և սկսեն պարապվել հոգաբարձութեամբ կառա-
վարութիւնը այս դրութեան մէջ մտածում էր
զսպել քուրդներին և ուրիշ վայրենի ցեղերին։
Նպատակը վատ չէր, բայց նա սխալվեցաւ գոր-
ծադրութեան մէջ։ Որովհետեւ փոխանակ քուրդե-
րին Հայաստանի լեռներից հաւաքելու և նրանց
Տաճկաստանի մի անընակ կողմում (որպէս են
Միջագետի և Ասորեստանի անապատներն) գաղ-
թեցնելու, կառավարութիւնն նրանք թող տուաւ
հէնց Հայաստանում իրանց համար բնակութեան
և մշակութեան տեղեր բռնելու Բայց որպէս
Հոգրն հայերի ձեռքում էին գտնվում, պա-
պիւրից և հայրերից մնացել էին նրանց որպէս

ժառանգութիւն։ Քուրդին զժուար էր փողով
հայրի հող գնել։ որովհետեւ նա սովորած էր ա-
մեն ինչ բռնութեամբ խլել հայից, ինչ որ իրան
պէտք էր։ Այսպէս էլ արեցին։ Այստեղից յա-
ռաջ եկաւ հարստահարութեան մի նոր խիղճը,
այն է՝ հողային կամ կալուածական իւրե-
ղիւր։

Պատրիարքարանի առաջին Տեղեկագրի ար-
ձանագրութեանց մէջ, այսինքն մինչև 1872
թուականը, հոգային կամ կալուածական խիղճը
ներքի մասին ամենեկին յիշատակութիւններ չը
կան։ Կը նշանակէ, մինչև վերոյիշեալ թուականը
հայերն իրանց հողերի և այլ կալուածների տէրն
էին։ Դա այն ժամանակին է վերաբերում, երբ
քուրդներն բողոքովին չուական կեանք էին վա-
րում և տակաւին հողի հետ գործ չունէին։ Բայց
երբ կառավարութեան հրամանով նրանք սկսե-
ցին փոքր առ փոքր հաստատ կացութիւն հիմ-
նել, շատ բնական էր, որ պէտք է ծագէր հո-
ղային խիղճը։

Այս խիղճը, որպէս ասեցինք, երևան է գա-
լիւ 1872 թուականից յետոյ և պատրիարքարանի
երկրորդ Տեղեկագրի արձանագրութեանց մէջ
մենք գտնում ենք նրա յիշատակութիւնը։ Մինչև
այն օր հայերի միայն չարժանակ կայքը յափշ-
տակող քուրդներն և այլ վայրենի ցեղերն, այնու-
հետեւ սկսում են ձեռնամերձ լինել նրանց ան-
չարժ կայքերին։ Նրանք զանազան գաւառնե-
րում հայերից յափշտակում են մինչև 263 գիւ-
ղօրայք իրանց պատկանած հողերով։ Գաւառ-
ների և գիւղերի, նաեւ յափշտակողների անուն-
ները մի ըստ միոյն գրված են Տեղեկագրի մէջ։
Յիշեալ գիւղերից շատերի հայ բնակիչներին քուր-
դներն բողոքովին արտաքսում են և կալուածները

սեփականում են իրանց։ Բայց գիւղերի մէկ
մասի հայ բնակիչներին իրանց տեղն են թող-
նում, միայն հողերը նրանց ձեռքից խլելով,
իրանք դառնում են կալուածատէր։ Եւ այսպէս
հայերին հպատակեցնելով, քուրդներն նրանց
հայրենական հողը իրանց մշակել են տալիս,
տուրք և տասանորդ են առնում, և մինչև ան-
գամ բերքի կէս մասը իրանք են տանում։ Բացի
յիշեալ 263 գիւղերից և աւաններից քուրդերի
ձեռք են անցնում Սղեւոր գաւառի, Չարսան-
ջակի գաւառի և Չարշաբադի գաւառի բազմա-
թիւ հայաբնակ գիւղերի կալուածներն, որոնց
անուններն նշանակված չեն։

Քուրդներն չեն բաւականանում հայերի միայն
անձնական կալուածներով, նրանք սկսում են
տիրել նաեւ վանքային կալուածները։ և 21 վան-
քերի ընդարձակ հողերն զոհ են դառնում նրանց
յափշտակութեանը։ Նաեւ վանքերից շատերը
քարուքանդ են անում, և բողոքովին ջնջում են
նրանց յիշատակը...

Պէտք է ի նկատի ունենալ, որ յիշեալ յափշ-
տակութիւնների մէջ խառն են ոչ միայն քուր-
դերի հասարակ ժողովուրդը, այլ գլխաւորապէս
նրանց բէ կե բն, հոգեւոր շէլիս երն ու մուֆ-
թիին երն, և թուրք աղան երն, բացի դրան-
ցից և զանազան պաշտօնականներ, որոնք իրանց
բռնակալութեան հետ միասնաբար ունեն և ապա-
հովութիւն կառավարութեան կողմից։

Բարձր կառավարութիւնը փոխանակ յիշեալ
յափշտակութիւնների առաջն առնելու, փոխա-
նակ հայ ժողովրդի բողոքները լսելու, խիստ ան-
տարբեր կերպով է նայում այս անիրաւութիւն-
ների վրա, կարծես թէ, նա աւելի ուրախ էր,
որ այդ այդպէս էր լինում։ Նա մտածում էր,

մանակ նախնային օգնություն է հասցրել և մի քանի ընտանիքներ անվտանգ անց է կացրել Պարսկաստան, իբրեւյ՝ քաղաք խոստանում է հայերին ռուսաց զորքերի հետնապուշ յետոյ պաշտպանել նրանց մինչև քաղաքը թիւրքաց կանոնաւոր զօրքեր մտնեն և միջնորդել օսմանեան կառավարութեանը պատժել հայերի կոռւպցիոններին և նրանց կայքերը վերագործնել: Մի և նոյն բովանդակութեամբ նամակներ է ուղարկել բէգը Հին-Բայազէթի շրջակայ գիւղերի իշխաններին»:

Օգոստոսի 19-ին մեր թղթակիցը գրում է Հին-ԲԱՅԵԹԻՅԷ. «Այստեղ մի կուսակցութիւն է կազմվել, որի նպատակն է արգելել գաղթականութիւնը, Այդ կուսակցութիւնը մտադիր է մի աղերսագիր ուղարկել Վանի վալիին, խնդրելով նրանից նախազգուշութեան միջոցներ ընդունել հայերի կեանքը և կայքը ապահովելու համար ռուսաց զօրքերի հետնապուշ յետոյ: Մի նամակ էլ կուղարկվի Վանի առաջնորդին, որ նա հրաւիրէ հայերին մնալ իրանց տեղերում: Այդ մի պատգամաւոր կուղարկվի Վան քաղաքը: Կ. Պօլսի ազգային ժողովը հոգս չէ տանում գաղթականութեան առաջն առնելու համար: Այստեղի հայերը անհամբեր սպասում են Կ. Պօլսի պատրիարքի կոնդակին, սպասում են նրանից խրատականքի և այդ չը ստանալով կարծում են, որ պատրիարքը չէ վստահանում պատասխանատու լինել ազգի առաջ նրա ապագայի մասին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻԱ

Լրագիրներում տպւած են հետեւեալ տեղեկութիւնները Ֆրանսիայի մասին:

Ֆրանսիական յետադիմական լրագիրները շատ մաշլ կերպով են նայում այդ պետութեան ապագայի վրա: Ամեն օր նրանք հասարակութեան մէջ մի երկրպաղ լուր են տարածում և թէ՛ հաւատանք այդ լուրերին Ֆրանսիային սպառնում է եւրոպական միացած պետութիւնների յարձակումն և կոմունան: Այդ լրագիրները ամենից շատ վախեցնում են մարշալ Մակ-Մաճօնի հրաժարականով, որ նա իբր թէ պէտք է ներկայացնէ Ֆրանսիական պարլամենտներին աշխարհահանգստի վերջնալուց յետոյ: Եթէ այս լուրը ճշմարիտ լինէր, Ֆրանսիայի տարաբաղումը:

Թէ հայը իմ հուս հպատակն է, նա եթէ հող էլ չունենայ, դարձեալ իր գլուխը մի պահէ, բայց ապստամբ չըլլալով պէտք է որ կերպով կապել երկրի հետ, որ նա չը չարթի...:

Այս կարծիքը առանց ապացոյցի չէ, քանի որ տեսնում ենք, որ հայերին պատկանող կալուածների մեծ մասը ինքն կառավարութիւնը յափշտակելով, տալիս է մահմետականներին: Եւ որպէս զի իր անիրաւութեանը մի օրինական ձև տալիս, նա հարուում է թափուի խաբէական օրէքը: Այս օրէքը հիման վրա ամեն հող, որ մնացել էր մի քանի տարի անմշակ, նա համարվում է մահուում, այսինքն անտէր և կառավարութեանը պատկանող: Այսպիսի հողերը ինքը կառավարութիւնը գրաւելով, շատ չնչին գումով արձանագրում է մահմետականների վրա և նրանց անուումով արքունի կալուածագիր է տալիս: Այսպէսով հայերն կարող էին զրկվել իրանց կալուածների մեծ մասից, ահա պատճառը:

Ընթերցողն գուցէ յիշում է, որ հայերը հարկահանների և տասնորդի կապալաւորների հարուածադրութիւններից ստիպւած, շատ անգամ իրանց հողերը անմշակ թողնելով, գաղթում են դէպի Կ. Պօլս, կամ մի այլ քաղաք, համարութիւնով և ուրիշ տաժանական աշխատութիւնով:

*) Կառավարութեան յափշտակած հողերն բոլորովին տարբեր են այն գիւղօրայքից, որոնց մասին լրջվեցաւ: Եւ թափուի օրէքը այնքան խառնիճաղանջ մի բան է, որ ամբողջ յօդուածներ պէտք են բացատրելու այս խորամանկ կալուածական օրէքի տրամադրութիւնները, որով հողը անուումով միայն պատկանում է այս և այն մարդուն, բայց իսկպէս նա տեղութեան սեփականութիւն է:

Թիւնը շատ աննշան կը լինէր և մի քանի օրվայ ընթացքում կընտրվէր հանրապետութեան այժմեան նախագահի փոխանորդը և գործերը կերթային իրանց ընթացքով: Բայց այս լուրը ճիշդ չէ: Մարշալ այժմ իրան շատ հանգիստ է գգում և չէ էլ մտածում հրաժարական տալ:

Ֆիներալ Բօրէլի միևնույնութեան մէջ մընալը միակ կէտ է, որ կարող է անբաւականութեան առիթ լինել հանրապետութեան նախագահի և ազգային ժողովն մէջ: Այդ գեներալը մինիստր դառնալու առաջին օրից աշխույժեամբ կարողացաւ իր հետ թշնամացնել ազգային ժողովների գրեթէ բոլոր անդամներին և երբ ժողովների նիստերը նորից կը սկսվեն նա երևի մի քանի յարձակմունքների կենթարկվի: Ինչպէս էլ վերջնանայ այս անբաւականութիւնները, դրանք ոչինչ յարաբերութիւն չեն կարող ունենալ նախագահի հրաժարականի հետ: Մարշալ Մակ-Մաճօն շարունակում է հաւատալ Դիւֆօրին և առանց կարգաւոր ստորագրում է ամեն թուղթ, որ նրան ներկայացնում է այս միևնույնը:

Վախարհահանգստի ընծաների բաժանելը նշանակած էր սեպտեմբերի 20-ին: Այս օրը պէտք է հանդիսաւոր զօրախաղ լինէր ի պատիւ այն բարձրաստիճան անձանց, որոնք պէտք է ներկայ գտնվէին ընծաները բաժանելու հանդիսին: Եւստով յայտնվեցաւ որ այդ հանգէսը յետաձգված է մինչև հոկտեմբեր: Այսպէս կարգադրել է մինիստրների խորհուրդը, կամենալով, որ հանդիսին ներկայ գտնվեն ազգային ժողովների անդամները, որոնք իրանց ներկայութեամբ առաջուց համաձայնութիւն տուած կը լինեն այն կէտ միջին Ֆրանկ ծախսի համար, որ հարկաւոր է այդ հանդիսին: Բայց մինիստրութեան յայտնի է շատ փորձերից, որ աշխարհահանգստի ընծաներ բաժանելուց յետոյ, շատ քիչ է հետաքրքրում հասարակութեանը և այցելուների թիւը պակասում է: Վերջին օրերը աշխարհահանգստի այցելուների թիւը չափազանց մեծացաւ:

ԲՕՍՆԻԱ

Աւստրիական զօրքերի գլխաւոր բանակից գրում են հետեւեալը:

Աւստրիացիները Բօսնիայում արդէն սկսել

հաց վաստակելու: Հողը մնում է անտէր, թէև գաղթականի կամ պանդուխտի ընտանիքը մնացել էր հայրենիքում նոյն հողի մօտ. բայց նա կառավարութեան հայեացքով ան տ էր է համարվում, քանի որ մշակող չունի: Ի նկատի ունելով ասիական Տաճկաստանի այնքան բազմաթիւ հայ գաղթականները, որոնցից միայն 45 հազար հոգի Կ. Պօլսում է գտնվում, շատ հասկանալի էր, թէ որքան հայերին պատկանող հողեր մնացած կը լինեն անտէր և անմշակ: Այս պիտի հողերը տեղութիւնը մահուում համարվով, տալիս է մահմետականներին, և թշուառ հայը պանդուխտութենից վերագառնալով, գրտնում է իրան գրկված այն միակ հայրական ժառանգութենից, որ նրա վերջին յոյսն էր:

Տաճկաց կառավարութիւնը չէ խնայում մինչև անգամ վաճառքին և եկեղեցական կալուածներին: Վաճառք և եկեղեցին նրա օրէնքով մի վերացական անձնաւորութիւն է, նա չէ կարող կալուածատէր լինել: Եւ հայ բարեպաշտների երկար դարերից հետէ իրանց նուիրական տեղերին ընծայած հողերը, որոնցով ապահովուած էր վանքերի գոյութիւնը, ընկնում են մահմետականների ձեռքը: Պէտք է գիտենալ հայոց վանքերի այն բազմաթիւ քանակութիւնը, որ ասիական Տաճկաստանում, պէտք է գիտենալ, թէ որքան ընդարձակ տարածութեամբ տեղեր պատկանում էին վանքերին, որպէս զի հասկանալի լինի ազգային հարստութեան այս մեծ կորուստը:

Հայը Հայաստանում հազարաւոր թշուառութիւններ կրելով, և ամեն տեսակ հարստահարութիւնների համբերելով, մի բանով միայն մընալիքում էր իրան, թէ նա իր հայրերի քրոջներով սրբված հողի տէրն է: Բայց այս միջա-

կն վարչական կարգադրութիւններ անել: Դերվիշաւում, Ժէպցեւում, Ջինիցաւում և Բուզովաշում արդէն հիմնված են աւստրո-ունգարական փոստային և հեռագրական կայաններ և հեռագրական վարչութիւններ, իսկ Սերաեվօ քաղաքում հաստատված են կենտրոնական փոստատուն և հեռագրատուն: Սերաեվօ քաղաքը վերցնելուց յետոյ մի յայտարարութեամբ տեղեկացրին բնակիչներին, որ արդէն քաղաքը պաշարողական դրութեան մէջ է և բնակիչներից պահանջեցին, որ անյապաղ բոլոր զէնքերը յանձնեն աւստրիացիներին: Այս կարգադրութեանը չը հնազանդողներին մահուան պատժով էին սպառնում:

Քաղաքը վերցնելու ժամանակ բոլոր թիւրք պաշտօնական անձինք փախել էին, ուստի հարկաւոր եղաւ քաղաքային վարչութիւն հիմնել անպաճառ ընտրել և պաշտօնականներ նշանակել: Այս բոլոր գործերը աւստրիացիները շատ արագ կարգադրեցին: Աւստրիացիները իրանց նշանակեցին պաշտօնական անձանց, իսկ քաղաքային վարչութեան անդամների ընտրել գեներալ Ֆիլիպովի: Եւստից չորս գաւառութեան ազգաբնակչութեան պատգամաւորներին, որոնք ներկայացան նրան իրանց հպատակութիւնը յայտնելու համար: Իւրաքանչիւր գաւառութիւն ընտրեց չորս ներկայացուցիչ քաղաքային վարչութեան համար և այդ հիմնարկութիւնը հաստատվեցաւ: Վարչութեան առաջին գործն եղաւ նշանակել առաջին պիտոյքի միջոցների գները, որոնք վերջին ժամանակ կրկնապատկվել էին:

Վարելի է տեսլ, որ աւստրիական զօրքերից Բօսնիայի գրաւված մասում կարգը կատարելապէս հաստատված է:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՍՍՆ-ՍՍՑՖԱՆՕ, 28 օգոստոսի (9 սեպտեմբերի): «НОВОЕ ВРЕМЯ» լրագրին հեռագրում են հետեւեալը. «Կ. Պօլսում շատ մարդիկ են կալանաւորվել: Ասում են, որ նախկին սուլթան Մուրադի կուսակիցները գաւազրութիւն են կաղմել և մտադիր են յարուսթիւնից ևս զրկվեցաւ նա: Մի կողմից քրքրեն բռնութեամբ խլեցին նրա ձեռքի հողը, միւս կողմից, ինքը կառավարութիւնը յափշտակելով, յանձնեց մահմետականներին: Եւ ինչ մընաց:

— Հայի ապագան Տաճկաստանում է, ասում են կարճատեսները: Մենք չենք հասկնում, թէ ինչ ապագայ կարող է լինել մի երկրում, ուր կեանքի և կայքի ապահովութիւն չը կայ: «Յեւտոյ լաւ կը լինի...» երևակայում են կարճատեսները...:

Ով որ չէ խոստովանում մահմետականութեան կլանող և ողնացնող բնաւորութիւնը, նա ուրախում է պատմութիւնը. բայց ուրախալ պատմութիւնը, նշանակում է, ուրախալ ճշմարտութիւնը:

Որ և իցէ ժողովրդի համար ոչինչ բաղաւոր ապագայ գուշակել չէ կարելի, քանի որ նրա ապրուստի պահանջներն հաստատուն հիմքերի վրա կայացած չեն, քանի որ նա թէ նրաթապէս և թէ բարոյապէս մայվում է և կլանվում է մի ուրիշ և աւելի զօրեղ տարրից: Ասիական Տաճկաստանի հայը ապահովված դրութիւն չունի և դրա մեծ ապացոյցն այն է, որ նա իր տան մէջ ապրուստ ձարել չէ կարողանում, և ինչ որ էլ վատտակում է, նրա ձեռքից խլում են, և նա միշտ մնում է աղքատ ու սոված, և միշտ ստիպված է պանդխտութեան մէջ հաց որոնել: Տաճկաստանի հայը երեքեալ և տատանաւոր վիճակի մէջ է ապրում: Այսպիսի տուժել արմատ ձգել կարող չէ և շուտով կը չորանայ...:

Մենք ունենք Ասիական Տաճկաստանում ժողովրդի երկու դասեր՝ վաճառականներ և հողագործ մշակներ. վերջինը թէ իր բաղմութեամբ

ձեկվել սուլթան Համիդի բնական խալաւոր վրա: Մայրաքաղաքի թիւրք աղքատաւորութիւնը սաստիկ յուզված է: Պալատական պահապանների թիւր մեծացրած է: Կառավարչական շրջաններում մեծ երկիւղ է տիրում:

ՎԻԵՆՆԱ, 28 օգոստոսի (9 սեպտեմբերի): Ունգարական թիւրքաւոր մամուլը արամադրութիւնը փոխվում է: Նա խոստովանում է, որ աւստրո-թիւրքական զաշնադրութիւնը անօգուտ և անկարելի է: Մի քանի լրագիրներ կարծիք են յայտնում յօգուտ աւստրիական զօրքերի Բօսնիայից յետ դառնալու: Անբաւականութիւնը կառավարութեան դէմ սաստկանում է:

ՊԵՐԱ, 28 օգոստոսի (9 սեպտեմբերի): Այստեղ հասաւ գերմանական նոր դեպտան կոմս Հալֆէլդ: Սուլթանին ներկայանալուց առաջ նա նաեւց ուղևորվեցաւ Սան-Սոսֆանօ և երկար խորհրդածութիւն ունեցաւ գեներալ Տօլէքէի հետ: Աւստրո-թիւրքաց զաշնադրութեան վերաբերութեամբ Բ. Կրան մէջ տարաձայնութիւն է ծագել: զինուորական մինիստր Մուստաֆա-փաշա կործիք յայտնեց ընդդէմ որ և է համաձայնութեան Վիեննայի հետ:

ԲԵՐԼԻՆ, 29 օգոստոսի (10 սեպտեմբերի): Բօլքարո-րումբերական սահմանները որոշող մասնաժողովն մէջ, որ Կ. Պօլսում պէտք է հաւաքվի, Դերմանիայի ներկայացուցիչներ նշանակված են գնդապետ Երեր և մայոր Կրամեր: Բօսնիայի սահմանները որոշող մասնաժողովն մէջ, որ Բէլգրադում պէտք է հաւաքվի, նշանակված է մայոր Ալտէն Չէրնո-գորայի մասնաժողովում՝ Մասսօլ: Բոլոր այս անձինք պատկանում են գերմանական զինաւոր շտաբին:

ԲԵՐԼԻՆ, 29 օգոստոսի (10 սեպտեմբերի): Ներսիսապօրծ Նօրելիւղ ասօր վախճանվեցաւ, թղթերի հիւանդութենից:

ՎԻԵՆՆԱ, 29 օգոստոսի (10 սեպտեմբերի): 36-դ զօրաբաժնից, որ գտնվում է Բառնաւուկայի մօտ, պաշտօնապէս հազարգում են օգոստոսի 28-ից, որ թշնամին յետ է մղված և փախչում է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 օգոստոսի: «Русский Мир» լրագիրը ստացաւ երկրորդ նախազգուշութիւն:

Եւ իր բարձր նշանակութեամբ կազմում է այն, որ կոչում ենք ամբոյս, վաճառականը իր տանը հանգիստ չէ: Նա միշտ թափառում է իր շահերի ետեւից. նա այնտեղ է, ուր նրա շահերն են գտնվում: Վաճառականը հայրենիք չունի, նրա հայրենիքն այնտեղ է, ուր արծաթ կայ: Վաճառականը հասարակաց շահերի համար չէ մտածում. նա ետական է: Մնում է մշակ դասը, որ հասարակութեան գլխաւոր ուժն է կազմում. նա իր հայրենի երկրում հանգստութիւն և ապրուստ չը գտնելով, իր կեանքը նոյնպէս պանդխտութեան մէջ է անցկացնում, և նրա ամուր ձեռքերը, որ հայրենի հողը պէտք է մշակվին, մեծ քաղաքներում դաղդղում են ստոր և ծառայական պարագմունքներով: Եւ մշակը, արդար երկրագործը, ժողովրդի պարէնը հայթայթողը դառնում է համալ բեռնակիր, գրաստ...:

Եւ այսպէս ասիական Տաճկաստանի ժողովրդաբնակչութեան մեծ մասը գաղթականութեան մէջ է ապրում: Մի դաս միայն մինչև այսօր մնում էր անշարժ. գրանք էին վաճառքին արեւգաններ: Բայց երբ վաճառքի ենթարկվեցան նոյն վիճակին, որպէս ժողովուրդը, երբ նրանք էլ զրկվեցան կալուածներից՝ իրանց գլխաւոր հարստութենից, այն ժամանակ վաճառքին միաբանութիւններն նոյնպէս ցրվի սկսան, և հայոց նուիրական տեղերն մնացին ամայի:

(Կը շարունակվի)

Յ Ա Յ Տ Ա Ր Ո Ի Թ Ի Ն Ե Ր

Օգոստոսի կեսից լոյս կը տեսնեն Ս. ՄԱՆ-ԴԻՆԵԱՆԻ հետեւի նոր աշխատանքները՝

1) Ընթերցարան հայերէն լեզուի «ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, երբորդ տարվայ ՈՒՍՄԱՆԻԲ ԵՒ ԸՆԹԵՐՑՄԱՆԻՔ» անունով.

2) «ՀԱՄԱՌՈՑ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ»

Ծանկացողները ստանալ յիշեալ գրքերը իր ծանանակին կարող են դիմել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱՐԱՆՈՑԸ» կամ Զաք. Գրիգորեանի գրախանութանցը.

3—3

Տէօրիական և փորձական դասեր հասարակ և կրկնաթիւ գրապահութեան (բանկի, ֆար-րիկի առևտրական, հիմնութեան երկաթուղու, բաժանորդական և այլն) և առևտրական թուա-բանութեան, նմանապէս և կերպակու սրտանով:

Կարող չարունակվում է 6 ամիս:

Թ. Խաչատուրեան

Գրիմը Լաբորատորի փողոց. Պատրիարքարան կամ Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկը:

1—3

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Վոլկան» գրախան. Զաք. Գրիգորեանցի:

1. Պոլոնիական լեզուի և արաբական լեզուի արաբական (մանկական) թատրոնի թարգմ. Թ. Նազարեանց. տպագրութիւն Զ. Գրիգորեան.

Գրին է 20 կոպէկ:

2. Նախապաշարունակ—I հատոր. աշխատա-սիրութիւն Թ. Նազարեանց:

Գրին է 50 կոպէկ:

Հետով դուրս կը գալ մամուլի տակից:

1. Ղուկասեանց—ընթերցարան, երբ. տպագ.

Գրին է 40 կոպէկ:

Ամենակարճ միջոցով դուրս կը գալ տպագ-րութեանց երեք, այն է՝ հուսիսեան, ֆրանսիական և հայերէն լեզուներով մեր «Վոլկան» հիմնիկ-վան լրագրի բնիքը՝ անունովը բերելով: Դրա տպագրութեան համար բաց արեւը յատկապէս Տէր-Յովհաննիսեան կանդիդատութեամբ, որ գտն-վում է Վոլկան հիւրանոցի կարգում, կամուր տարագրութիւն:

Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեանց

3—3

ТИПОГРАФИЯ

И

КНИЖНЫЙ МАГАЗИНЪ

А. МАТЕСИ-АКОНОВА

ТИП. ПРОТ. ТЕАТРА ВЪ СОБ. ДОМѢ.

Հուշի Մատեսի Թատրոնը պատիւ ունի յայտնելու, որ այս սեպտեմբերի 1-ից ծախ-վելու են իր գրադաճաւանցում բոլոր հա-յերէն, ռուսերէն և ֆրանսիական դասագրքերը իրանց վրա գրած գիներովը. ցանկացող ծա-րաքաղքայինքին ուղարկվում են նոյնպէս նշանակված գիներով:

Ընդունվում են նոյնպէս ամեն յանձնարա-րութիւնը տպագրութեան համար բոլոր լե-զուներով և բաւական է ժան գինովը: Գու-մարով առնողներին զեջումը կը լինի:

Ա. Մատեսի Թատրոնաց

1—2

Թիֆլիսի Ս. ԳԱՅԱՆԵԱՆ հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանը բացվել է օգոս-տոսի 15-ին և այլ օրից սկսված ընդուն-վում են նոր աշակերտուհիներ:

Տեսուչ Ար. Յովհաննիսեանց

1—3

«ՃՈՐՏՈՒԹԱՆ ԻՐԱՌՈՒՆՔԸ ՎՐԱՍԱՆՈՒՄ»

Գուստավ Բանթարեանցին, ռուսերէն լե-զուով, ծախվում է Բերնշտամի գրադաճա-ւանցումը, Թիֆլիսում, Գոթլիբի պրոս-պէկտի վրա: Գրին է 75 կոպ. փոստի ծախ-սով 80 կոպէկ:

5—6

«Трудъ, Общественная жизнь» լրագրի գրասենեակը տե-ղափոխված է Դոբրոյուլյ փողոցի վրա, ԱՐ-ԾՐՈՒՆՈՒ ՊԱՆԵՐՈՒՄԸ:

2—2

ՔԱՐԱՆՈՒԻ «ՌՈՒՍՍԱՏԱՆ» ԸՆԴՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏԵՎՈՒՄ Է ԶԵԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՍԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԵՐԱՍ

ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԵՑՄԱՆ—ՇԵՆԵՆԳ

Ծախվում է ՇԵՆԵՆԳԻ ՊԱՎԼԻԹՈՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՐ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂԶ ՎԱԳՐԱՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒ-ԴԸ 25 ԿՈՊ., ԻՍԿ ՓՈԲՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՐ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏԵՎՈՂ ՊԱՇԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՈՊԵԿՈՎ:

Կովկասի ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆԸ յայտնում է հետեւեալ ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆ մասին ցանկացողները պէտք է խնդրէր ներկայացնեն բժշկական մասի կա-ռավարչի անունով (Սպարկայա փողոց, իշխան Անդրոնիկովի տուն):

Մանկարարական արհեստի բարձր կուրսեր մանկու համար, որ իրաւունք է տալիս ստա-նալ մանկաբարձի վկայական և մոտեւ պետական ծառայութիւն իրել քաղաքական և բուսա-կան մանկաբարձներ, որ տալիս է բժշկական կանոնադրութեան յօդ. 541 մէջ յիշված արտո-նութիւնները, պահանջվում է գիտելու. ուսաց լեզուից ուղղ կարգալ և գրել, պատմի-զրուր և բերանացի կարգացածը, թուարանութեանց չորս գործողութիւնները (զուսարում, հանում, բազմապատկում, և բաժանում), անունական թուր և հասկացողութիւն կու-տորաներից: Իսկ նրանցից, որոնք կը ցանկանան մոտեւ ստորին կուրսերը, որոնք աւարտելուց յետոյ կը ստանան քիւղական մանկաբարձների վկայականներ, պահանջվում է ուսերէնից կարգալ և գրել և բերանացի պատմել կարգացածը:

Ինչպէս առաջինները նոյնպէս և վերջինները պէտք է 16 տարեկանից փոքր և 30 տա-րեկանից մեծ չը լինեն:

Խնդրել հետ պէտք է լինեն մեթոդական և ծնողների կամ ամուսնի (եթէ մանուղը ամուսնացած է) թոյլտուութեան վկայականները:

Թոշակաւորմը հետեւեալն է. եթէ եկել աշակերտուհիներից տարեկան 40 ռուբլ, իսկ դի-չերթիկներից, որոնց բոլոր հոգերը ուսումնարանը կը տան, 240 ռուբլ և միանուագ 60 ռուբլ սկզբնական ծախսերի համար:

Տարեկան թոշակաւորմը մոնցում է սկզբից և չէ վերադարձվում, եթէ որ և է պատ-ճառով աշակերտուհին ուսումնական տարվայ ընթացքում թողնէ ուսումնարանը:

Ուսման կուրսը երկու տարվայ է:

Մանրաման տեղեկութիւնները կարելի է ստանալ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆՈՒՄ:

5—6

1. Ն. Տէր-Ղևոնդեանի Մայրենի լեզուի առաջին տարին վեցերորդ տպագրու-թեամբ, բազմաթիւ պատկերներով զարդարված և նորանոր տապալումներով առաջնորով, հանդիսանում է յօդուածներով լրացրած: Գրին է 35 կոպէկ: Գուստավ Բանթարեանցին զեջումը կը լինի:

2. Մայրենի լեզուի երկրորդ տարին չորրորդ տպագրութիւն, նոյնպէս նորանոր պատկերներով զարդարած և մասնաւոր փոփոխութիւններով լրացրած: Գրին է 40 կոպ.: Գուստավ Բանթարեանցին զեջումը կը լինի:

Մանթոնութիւն. Վերոյիշեալ գրքերը ընդունված են Թիֆլիսի թեմի պ. թեմ. վե-րատեսչից իբրեւ սկզբնական դասագիրք հայոց լեզուի իր ձեռքի տակ եղած բոլոր ուսում-նարաններում: Սրա ընդունված են նոյնպէս Կովկասի հայոց ուսումնարաններից գրելթէ ամենում, նմանապէս և միւս թեմեր ուսումնարաններից: շատ երկու վաճառվում են բացառապէս Կենտրոնական գրադաճաւանցում: Մայրենի լեզուի Գ. և Գ. տարին պատրաստ կը լինի մինչև սեպտեմբերի 10-ը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1.

Տ Ե Ղ Ե Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ		Բ.	Կ.	ՀԵՌԱԳԻՐ	Բ.	Կ.	ԹՈՒՂԻ	ՓՈՍՏ	ԲԺՇԿԱՆՈՑ	«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
(Օգոստոսի 31-ին)					Բ.	Կ.				
Ոսկի (պոլոնիական)	8	05		Կովկասի և Ան-			Թիֆլիսից Գ. Թի-	Ամեն տեսակ թէ նա-	Հիւանդների ընդունելու-	— ԹԻՖԼԻՍ. ԶԵՂԱՆՑԻ. ԱՂ-
Ղին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500			դրկովկասի քա-			(Հանապարհորդների գնացքը) 9	մակներ, թէ լրագրիներ	թեւը 8-ից մինչև 10 ժամը	պիսի յօդուածները մեզ հար-
Հին 20 4. 72 պր. 1000 մ.	1250			ղաները	1		ժամին 21 րոպէ առաւօտեան	թէ ծանր փոստ ամեն տեղ	յուսիսի 1-ից մինչև սեպ-	կաւոր չեն, լուրեր և տեղեկու-
Վիգորչինի 50/0 առաջի փո-				Ռուսաստան	2		Միւսից Միւսի 10 րոպէ (խառն	ուղարկելու, ընդունվում	տեմբերի 1-ը:	— ԵՐԵՒԱՆ. Օ. Մ. Մ. Ներ-
խառնութեան տուր. 100 շ.	236			Աստորիա	3		գնացքը) Երեկոյեան 5 ժամ. 18	են ամեն օր, առաւօտեան	Երեքշաբթի. վերմիչէլ	քին. Աղուսի ռուսաւորանը
Երկրորդ 85/0 վիգորչին շ.	235			Անգլիա	4		րոպէ:	8 ժամից մինչև 1 և կէսօրից	ներքին հ. Բակտ վենե-	ամենքի զանչէն տարաւ:
Մարսիկի կուրսը 260 —	100			Գերմանիա	2	85		յետոյ 3 ժամից մինչև 7:	րական և կայուն հ. Բա-	— ԳԱՐԵՋԻ. Թ. Թ. Պ. Թօղու-
Լժուիցի կուրսը Օգոստայի				Ֆրանսիա	3	75		Իսկ կիրակի օրերը հասա-	խտով կանանց, երեկո-	ած լաւ չէ:
	9	65						րակ նամակներ մինչև 10	յեան հ. և մանկաբարձու-	— ԵՐԵՒԱՆ. Հայ. Թօղուածը
Վենայի կուրսը ամէ 121 զւ.	100							ժամ առաւօտեան և 3—7	թեան. Պէտեով աչքի հ. և	առանց կարդալու գեցցինք զամ-
Դաւրթի բարձր.	5	40		ԱՆԿՐԿՈՎԿԱՍՏԱՆ ՄԱՆ-				երեկոյեան:	2 օր երեքշաբթի. վերմի-	բիւղը, նա վատ էր գրած:
Աւետարական բանկի աղ-				ԿԱՐԱՐՁԱՎԱՆ ԳՊՐՈՑ				Ռուսաստանից և	չէլ ներքին հ. Բակտ	— ԱՆԿԱՐԱՆ. Ա. Ն. Կար-
ցիան 200 մ.	315			(Վէրայի վրա № 38)				փոստը առաւօտեան Թիֆ-	կրծքային և ջղային հ. և	դացէք վերին պատասխանը:
Փոթի Թիֆլիսեան երկա-								լիսում ամեն օր: Բա-	Հինգշաբթի. վերմի-	— ԹԻՖԼԻՍ. Խ. Ուսանաւոր-
թուղու աղկիան 125 մ.	102							զմի տարիներից երեք-	չէլ ներքին հ. Բակտ	ների չենք տալի:
Շաբարը բրոցկու	7	25		Միւսից կանանցի ընդ ու-				շաբթի և շաբաթ օրերը:	կրծքային հ. Գուստանց	— ՇՈՒՇԻ. Ա. Գ. Ստացանք
» միւս տեսակը	7	35		ն երկու թիւերը գերեկայ				Երեկոյեան տարիներից եր-	սիֆիլիտական և միջային գոր-	օրիորդ Ա. Կ. Մալիկի ձեր տա-
» շաբարաւարը	6	—		և գերեկայ ամեն ժամա-				կուշաբթի, հինգշաբթի և	ծարանների 10—11 ժամ. Կ.	րեկան վճարը: Բայց չը գիտէիք
» արտադր.	5	90		նակ օրը 50 կոպէկ վա-				շաբաթ, փոթի-Թիֆլի-	Կ. Բախտով կանանց և ջղա-	ձեզ համար է թէ պ. Կ. Գ-ի
» մարք վճարած	11	—		ձուկ, իսկ չքաւորների ան-				լիսեան երկաթուղուց	յին հ. և	համար:
Բաժարակը Արեւանու Ա-				վարձ: Աւանձին սենեակ-				ամեն օր: Ռուսական տարի-		
մերկայի սերմը.	8	20		ներում ամիսը 30 — 50				ներից չորեքշաբթի և կի-		
Միւս տեսակը հին սերմից.	7	20		րոպէ: Կանանց հի-				րակի: Բեյլի 4 և 5 րոպէ		
Բուրգը թուշի	6	50		ւանդութիւնը 30 րոպէ ամ-				րակից երեքշաբթի և շա-		
» թարաքամի	3	50		բածնաւորների մէջ վարձը				բաթ:		
Ալիւր Շորաքաւու	1	80		ընդհանուր սենեակում 18						
» Երեւնի.	—			րոպէ, իսկ մասնաւոր սե-						
Գարին.	1	30		նեակներում 30 րոպէ ամ-						
Մոմը բնածաղկի (серап.)	12	70		սեական.						
Միւս աղս Նուրկայ.	200			Երեւնի և Կիւսանդ կա-						
Կաւեթ Նուր.	130			նանք և երեկոյեանի ըն-						
Կոկանը Նուրկայ (սոմ.)	48			դունելութեանը ամեն օր,						
Ֆրեդոնը (լասը) Աղու-				բացի կիրակի օրերից, 91 ժ-						
լեաց	55			մինչև 11 ժամ առաւօ-						
Կոֆէն մոկոի.	25			տեան: Բժշկական Ա տ-						
» լիվանի	18			նով.						
» մարանկոյինը	16									